նական հոգւոյ) աւելի զօրութիւն քանթէ մօրն ամենայն կենդանեաց չորից տարերաց և կամ զօրաւոր շրջականաց լուսայտուից 'ի վերայ երկրի, զի որ մին կրտսերագոյնն 'ի նոցանէ զօրագոյն է բնութեամբ քանթէ բնական բնութիւնս մեր, որովհետև ամենայն ստեղծեալք 'ի Տեառնէ զօրեղագոյնք քանթէ բնութիւնս մարդոյ պահելով պատուիրանս Տեառն իւրեանց ընթանան, 'ի գործ շարժին ըստ սահմանի, որում հրամայեաց նոցայ Տէր՝ ուրեմն պարտ է մեզ փոքրականս 'ի մէջ արարածոց կալ և մնալ ըստ Պատուիրանի Տեառն արարչին մերոյ, որպէս հրամայեաց ևս մեզ Տէր, Ես ոչ ուրանամ զի հրաման Տեառն եղև 'ի վերայ ամենայն բնական կենդանեաց 'ի վերայ երկրի, զի հնազանդեսցեն նախահօրն մերոյ Ադամայ. նմանս միևնոյն նախնին մեր Ադամ ըստ բանական բնութեամբ գտաւ իշխանութիւն 'ի Տեառնէ և 'ի արարչէն մերմէ զի յիշխեսցէ 'ի վերայ միմիայն բնական բնութեամբ կենդանեաց որ 'ի վերայ երկրի, այլ ոչ 'ի վերայ բանական բնութեան մարդոյ, կամիմ ասել թէ՝ որպէս ոչ գտաւ Ադամ հրաման յիշխելոյ 'ի վերայ բանական բնութեան մարդոյ, նմանապէս ոչ կարաց իշխել 'ի վերայ բնութեան իւրոյ, զի եթէ սա ստացեալ լինէր 'ի Տեառնէ իշխանութիւն յիշխելոյ 'ի վերայ բանական բնութեան, որպէս գտաւ 'ի վերայ բնական բնութեանց, բարեպէս կարէր ա-